



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.1 (31)

Естественные и физико-математические науки
(География и геология, биология, математика и механика, физика и
радиофизика)

Natural and Physical-Mathematical Sciences
(Geography and Geology, Biology, Mathematics and Mechanics, Physics and
Radiophysics)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2020

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.1 (31)

Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
(Աշխարհագրություն և երկրաբանություն, կենսաբանություն, մաթեմատիկա և
մեխանիկա, ֆիզիկա և ռադիոֆիզիկա)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան
ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ռ. Ալավերդյան
ֆ.բ.գ.դ., դոց. Ա. Բալաբեկյան
ֆ.մ.գ.դ., դոց. Ե. Մամասախլիսով
ֆ.մ.գ.դ., դոց. Տ. Հակոբյան
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան
ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան
կ.գ.թ., դոց. Լ. Փանոսյան
տ.գ.թ., դոց. Հ. Հարոյան
ֆ.մ.գ.թ., դոց. Ս. Մխիթարյան
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Մանասեղյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Վարդանյան
ֆ.մ.գ.թ. Ս. Ալեքսանյան
ֆ.մ.գ.թ. Տ. Աբրահամյան

Редакционная коллегия:

д.г.н., проф. Т. Варданян
д.ф.м.н., проф. Р. Алавердян
д.ф.м.н., доц. А. Балабекян
д.ф.м.н., доц. Е. Мамасакхлисов
д.ф.м.н., доц. Т. Акобян
к.г.н., доц. С. Суварян
к.г.н., доц. Г. Алексанян
к.г.н., доц. М. Григорян
к.б.н., доц. О. Паносян
к.т.н., доц. О. Ароян
к.ф.м.н., доц. С. Мхитарян
к.х.н., доц. И. Алексанян
к.х.н., доц. А. Мартирян
к.ф.м.н., ассист. А. Манаселян
к.ф.м.н., ассист. А. Варданян
к.ф.м.н. М. Алексанян
к.ф.м.н. Т. Абрамян

Editorial Board

DSc, Prof. T. Vardanyan
DSc, Prof. R. Alaverdyan
DSc, Associate Prof. A. Balabekyan
DSc, Associate Prof. Y. Mamasakhlisov
DSc, Associate Prof. T. Hakobyan
PhD, Associate Prof. S. Suvaryan
PhD, Associate Prof. G. Aleksanyan
PhD, Associate Prof. M. Grigoryan
PhD, Associate Prof. L. Panosyan
PhD, Associate Prof. H. Haroyan
PhD, Associate Prof. S. Mkhitaryan
PhD, Associate Prof. I. Aleksanyan
PhD, Associate Prof. A. Martiryan
PhD, Assistant A. Manaselyan
PhD, Assistant A. Vardanyan
PhD M. Aleksanyan
PhD T. Abrahamyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակչության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ՈԻԳԸ

Միրզոյան Նելլի


ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, բակալավր
Գիտական ղեկավար՝ Ա. Վարդանյան
Էլ. փոստ՝ nelly.mirzoyan1999@mail.ru

ԿԱՅՈՒՆ ԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Անտառների ճիշտ և ամբողջական կառավարումը չափազանց կարևոր է, քանի որ այն առաջնային նշանակություն ունի անտառների պահպանության և զարգացման գործում: Յուրաքանչյուր երկրում՝ կախված երկրի ներքի առանձնահատկություններից, անտառկառավարումն իրականացվում է տարբեր կերպ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հունվարի 15-ի N 7-Ն որոշման համաձայն՝ ՀՀ պետական անտառները կառավարվում են ՀՀ գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների կողմից՝ ներառյալ բնության հատուկ պահպանվող անտառային տարածքների (ԲՀՊՏ) համակարգը, որը հիմնականում ընդգրկում է անտառային լանդշաֆտները և հանրապետության ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60-70 %-ը:


ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրման և օգտագործման բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն է: Այն վերապահված գործառույթներն իրականացնում է նախարարության աշխատակազմի անտառային տնտեսության բաժնի, «Հայանտառ» և «Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ների միջոցով: Անտառային տարածքների շուրջ 75% -ը՝ ներառյալ 27 արգելավայրերից 13-ը, կառավարվում են «Հայանտառ»-ի (ՊՈԱԿ) և դրատարած-քային 19 մասնաճյուղերի միջոցով [1]:



ՀՀ բնապահպանության նախարարությունը հանրապետության անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կառավարման պետական վերահսկողության իրավասություններն իրականացնում է նախարարության աշխատակազմի Շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչության, Բնապահպանական պետական տեսչության, Կենսառեսուրսների կառավարման գործակալության, ինչպես նաև «Սևան» ազգային պարկ, «Դիլիջան» ազգային պարկ, «Արփի լիճ» ազգային պարկ, «Խոսրովի անտառ» պետական արգելոց», «Արգելոցապարկային համալիր», «Զիկատար» բնապահպանական կենտրոն, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ների միջոցով:

Այսինքն ՀՀ կառավարությունն իր 2004թվականի հունվարի 15-ի N 7-Ն որոշմամբ անդրադարձել է անտառային ոլորտի կառավարման ինստիտուցիոնալ վերակազմավորման հարցին և միմյանցից տարանջատել ոլորտի կառավարման և վերահսկողության գործառույթները:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն անտառների կառավարման գործառույթներ է իրականացնում անտառային հողերի շուրջ 75%-ի վրա, իսկ մյուս 25%-ի վրա այն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը՝ միաժամանակ կատարելով բնապահպանական վերահսկողության գործառույթները:




Այսպիսով, իրավական տեսակետից խնդրահարույց է ՀՀ անտառային օրենսգրքի (այսուհետ՝ Անտառային օրենսգիրք) 7-րդ հոդվածի 1-ին մասի ժո) կետում ամրագրված անտառային օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողության և


նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված բնապահպանական վերահսկողության իրավասությունների հարաբերակցությունը: Փաստացի, ՀՀ կառավարության 2004 թ. հունվարի 15-ի N 7-Ն որոշումը չի համապատասխանում ՀՀ անտառային օրենսգրքի դրույթներին:

ՀՀ անտառային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի ժդ կետով անտառային օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողությունը, և 2-րդ մասով ամրագրված բնապահպանական վերահսկողությունն իրականացնում է տվյալ բնագավառում լիազորված պետական մարմինը[2]:

Տարբեր պետական մարմինների կողմից կառավարումն ի հայտ է բերում նաև տարատեսակ հիմնախնդիրներ, որոնցից մեկը ներկայացրել ենք Ստեփանավանի անտառտնտեսության օրինակով: Այստեղ, համաձայն անտառ կառավարման պլանի, անտառ տնտեսությունում անտառածածկը կազմում է 5674 հա [3] (նկար 1), ըստ «Sentinel 2A» արբայնակայի պատկերից ստացված նկարի՝ 5173 հա [4] (նկար 2):



Նկար 1. Ստեփանավանի անտառտնտեսության անտառածածկը՝ ըստ գործող անտառկառավարման պլանի



Նկար 2. Ստեփանավանի անտառտնտեսության անտառածածկը՝ ըստ «Sentinel 2A» արբայնակայի պատկերի

Նմանատիպ խնդիրներից և հակադրություններից խուսափելու, ինչպես նաև ՀՀ-ում անտառները կայուն կառավարելու համար պետք է՝

- պարբերաբար թարմացնել անտառկառավարման պլանները (յուրաքանչյուր 3 կամ 5 տարին մեկ),
- կատարելագործել և հստակեցնել ՀՀ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կայուն կառավարման համակարգը,
- վերականգնել ՀՀ անտառային հողերի կառավարման ամբողջականությունը,
- բացառել պետական կառավարման երկու մարմինների ոլորտային նմանատիպ գործունեությունը,
- օպտիմալացնել անտառային տնտեսություն վարող կազմակերպությունների ցանկը, հստակեցնել դրանց կարգավիճակը:

Անհրաժեշտ է նաև վերականգնել «Հայաստան» ՊՈԱԿ-ի կազմում նախկինում գործող անտառային կարևորագույն մի շարք ստորաբաժանումներ, ինչպիսիք են՝ Անտառներմկայանը, Անտառ մելիորատիվ, Անտառ գիտափորձարարական և Անտառպաշտպանական կայանները, որոնց գործունեությունը նպատակաուղղված էր անտառապատման, անտառավերականգնման, անտառպաշտպանական և ան-

տառտնտեսական միջոցառումների իրականացմանը և դրանց արդյունավետության բարձրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Հայաստանում կայուն անտառկառավարման չափանիշներ և ցուցանիշներ, Ազգային ուսումնական սեմինար, Երևան 2017, էջ 6-7:

[2] ՀՀ անտառային օրենսգիրք, ընդունված՝ 24.10.2005 թվականին,

URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=21354> (Հղումը կատարվել է՝ 28.03.2019):

[3] ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ,

URL: <http://hayantar.am> (Հղումը կատարվել է 24.03.2019):

[4] ՀՀ բնապահպանության նախարարություն անտառների պետական մոնիթորինգի կենտրոն, URL: <http://forest-monitoring.am> (Հղումը կատարվել է 18.03.2019):

Միրզոյան Նելլի

ԿԱՅՈՒՆԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ կայուն անտառկառավարում, հիմնախնդիրներ, Անտառային օրենսգիրք:

Մեր երկրում գնալով նվազում են անտառածած կտարածքները: Առկա անտառային ֆոնդը պահպանելու և անտառապածածկ տարածքներն ավելացնելու առաջին պայմանը կայուն անտառկառավարումն է, որն ընդգրկում է անտառների պահպանությունը, պաշտպանությունը և վերհասկողությունը: Կայուն անտառկառավարման համար կարևոր է նաև օրենսդրական դաշտի հստակեցումը:

Աշխատանքի նպատակն է բացահայտել ՀՀ-ում անտառկառավարման հիմնախնդիրները՝ մատնանշելով հիմնական այն սկզբունքները, որոնց հիմա վրա ՀՀ-ում կարելի է իրականացնել կայուն անտառկառավարում:

Мирзоян Нелли

ПРОБЛЕМЫ УСТОЙЧИВОГО УПРАВЛЕНИЯ ЛЕСАМИ В АРМЕНИИ

Ключевые слова: управление лесами, проблемы, Лесной кодекс.

В нашей стране лесные площади сокращаются. Условием сохранения существующего лесного фонда и увеличения покрытых лесом площадей является устойчивое управление лесами, которое включает сохранение, защиту и контроль лесов. Важно уточнить законодательную базу для устойчивого лесопользования.

Цель работы-выявить проблемы управления лесами в Армении и дать основные принципы, на основе которых в Армении важно осуществить устойчивое лесопользование.

Mirzoyan Nelly

THE STABLE FOREST MANAGEMENT PROBLEMS IN REPUBLIC OF ARMENIA

Key words: stable forest management, main problems, Forest Code.

The woodland places are decreasing in our country. The first condition for saving available forest fund and for adding woodland places is stable forest management, it's include saving, protection and control. For the stable forest management also important the clarification of the legislative field. The aim of the work is to discover the main problems of the forest management in Republic of Armenia, and to give the main principles on the basis of which the stable forest management can be realized in Republic of Armenia.